ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«26» դեկտեմբերի 2018 թվականի № 190-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(«ԳԱՎԱՌԻ ՃՇՇ» ԲԲ ընկերության նկատմամբ)

Հիմք ընդունելով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի կողմից քննված «ԳԱՎԱՌԻ ՃՇՇ» ԲԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) նկատմամբ 2018 թվականի նոյեմբերի 21-ին թիվ 156-Ա հրամանով հարուցված վարչական վարույթի արդյունքները.

Պարզվեց, որ Ընկերությունը 2018 թվականի հունիսի 6-ի դրությամբ ունի ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված ընդերքօգտագործման վճարների մասով ապառքներ՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի մասով՝ 914.0 հազար դրամ, մշտադիտարկումների մասով՝ 17.0 հազար դրամ, ինչպես նաև սահմանված ժամկետներում լիազոր մարմին չի ներկայացրել 2017 թվականի 5-ՕՀՊ հաշվետվությունները: Վերոնշյալի արդյունքում Ընկերության կողմից խախտվել են ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 7-րդ կետերով և 61-րդ հոդվածով նախատեսված դրույթները, օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-328 պայմանագրի 5.1.2 կետով նախատեսված պայմանները, որը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն հանդիսանում է ընդերքօգտագործման իրավունքի պայմանները ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ ընդերքօգտագործողին զգուշացում տալու հիմք: 2018 թվականի հուլիսի 2-ի թիվ 04ՀՎ/29.4/3731-18 գրությամբ Ընկերությանը ՀՀ ԷԵԲՊՆ ընդերքի գործակալության կողմից տրվել է զգուշացում թույլ տրված խախտումները 90-օրյա ժամկետում վերացնելու վերաբերյալ: 2018թ. նոյեմբերի 21-ի թիվ 156-Ա հրամանով Ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը, քննարկելով Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթի արդյունքները գտավ, որ վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ հիմնավորմամբ.

Ընկերության կողմից գումարն ամբողջությամբ մարվել է, ինչը հաստատվում է Ընկերության տնօրեն Արշավիր Հակոբյանի կողմից վարչական վարույթի հանձնաժողովին ներկայացված վճարման անդորրագրերով: Ընկերության կողմից ներկայացվել են նաև ՊՎ-328 պայմանագրով նախատեսված 2017 թվականի 5-ՕՀՊ հաշվետվությունները:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «ԳԱՎԱՌԻ ՃՇՇ» բաց բաժնետիրական ընկերության նկատմամբ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2018 թվականի նոյեմբերի 21-ին թիվ 156-Ա հրամանով հարուցված վարչական վարույթը կարճել:

2. Ընդերքի գործակալության պետին՝ 2-օրյա ժամկետում ծանուցել ընկերությանը վարչական վարույթի կարճման հրամանի վերաբերյալ:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն հասցեատիրոջն իրազեկելու պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից՝ երկու ամսվա ընթացքում:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ**

12/26/2018

X

VERIFIED OCSP 26-Dec-18 18:02:47 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118